

**ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԻ ԻՆՔՍԱՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒԹԱԿԱՐԳ ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱՋՈՎՄԿՈՒ  
ՓԻԼԻՍՈՓԱՑԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵԶ**

**Ոիմա Միրումյան**

**Փիլիսոփայական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

Հատկանշական է այն փաստը, որ XIX դ. գերազանցապես տնտեսական երևույթների ուսումնամիջման դարաշրջան էր: Տնտեսական երևույթները, սակայն, քննարկվում էին փիլիսոփայական-քաղաքական ընդհանուր և սահմանային հիմնահարցերի համատեքստում: Պատճառն այն է, որ տվյալ դարաշրջանի մշակույթի ինքնազիտակցության մեջ արմատավորված էր այն գաղափարադրույթը, թե տնտեսական երևույթներն անհրաժեշտորեն ծնունդ են տալիս իրավունքի էության մասին հարցին և միաժամանակ հիմք հանդիսանում բարոյական աշխարհի երևույթների դիտարկման համար: Փիլիսոփայական-քաղաքական հիմնահարցերը, այսպիսով, ներկայացվում էին «իրավունք-տնտեսություն-բարոյականություն» իմաստային եռամիասնության համատեքստում: Դարաշրջանի քաղաքական ձգտումների ընույթը պայմանավորել է այն, որ փիլիսոփայական-քաղաքական մտքի առանցքն է դարձել ընդհանուր բարօրության հիմնախնդիրը: Այն դիտարկվում է երեք տեսանկյունից՝ նյութական բարիքների ստեղծման, նյութական բարիքների բախչման, նյութական բարիքների ստեղծման և բախչման նկատմամբ իշխանության վերաբերմունքի<sup>1</sup>:

Դարաշրջանին բնորոշ այս միտումն արտահայտվել է նաև ժամանակաշրջանի հայ մտածողների (ինչպես ազատական, այնպես էլ պահպանողական կողմնորոշում (ունեցող) ազգային հայեցակարգերում: Իբրև ելակետ՝ հայ մտածողներն ընդունում են

<sup>1</sup> Միրումյան Ռ., Տնտեսությունը որպես ազգի ինքնապաշտպանության հասարակական կառուցակարգ Խորեն Աշրջյանի փիլիսոփայա-քաղաքական հայեցակարգության կառուցակարգը Խորեն Աշրջյանի փիլիսոփայա-քաղաքական հայեցակարգության կառուցակարգը արդի աշխարհում: UNESCO-ի փիլիսոփայության միջազգային օրվա կապակցության գիտաժողովի կյութեր 20 նոյեմբերի 2014 թ., Երևան, Լիմուշ, էջ 3, տե՛ս նաև Խորեն Աշրջյան («Դմաստասեր հայոց» մատենաշարից), Երևան, Գիտություն, 2015, էջ 134:

սեփականության՝ իբրև մարդու իրավունքի, գաղափարադրույթը։ Ընդ որում, «իրավունք» հասկացության իմաստային բովանդակության մեջ ազատականները շեշտադրում են իրավաքաղաքական կողմը, իսկ պահպանդականները՝ հոգեբարոյական։

Ազատականների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շաղկապիում է իրավական պետության նրանց իդեալին։ Ըստ այդմ, սեփականությունը քաղաքակրթության երկրորդ (իրավունքից հետո) իրամայականն է։ Ավելին, սեփականությունն ինքնին իրավունք է, քանզի մարդու բնական պահանջմունքն է և նրա աշխատանքի (մարդու համար բնական օրենքի և գոյության անհրաժեշտ պայմանի) արդյունքը։ Սեփականությունը (իբրև իրավունք) նույնքան կարևոր է մարդու գոյատևման համար, որքան ազատությունը (իբրև իրավունք)։ Տնտեսական խնդիրը հասարակական կեցության ծնունդ է, մինչդեռ տնտեսական մարդը (Մատթեոս Մամուրյանի տերմինաբանությամբ՝ «տնտեսական եակը»)՝ հասարակական (ընտանեկան) մարդու մի այլ սահմանում։ Պահպանդականների հայեցակետում սեփականության հիմնախնդիրը շաղկապիում է «պարտք-իրավունք» բարոյական օրենքին։ Ըստ այդմ, սեփականությունը մարդու սուրբ և զսեմ պարտականության-կարողության՝ աշխատանքի արդյունքում ձեռք բերած իրավունք է։ Աշխատելու մարդու պարտականությունը-կարողությունը պայմանավորված է եռակի՝ բնական, հասարակական և աստվածային օրենքով<sup>2</sup>։

Տնտեսության փիլիսոփայության և քաղաքականության փիլիսոփայության նկատմամբ XIXդ. մտավոր վերնախավի դրսնորած վերաբերմունքը հատուկ հնչեղություն է ստանում այսօր՝ հին աշխարհակարգի կործանման և նոր աշխարհակարգի երևան գալու ժամանակաշրջանում, երբ ակնառու է դառնում համաշխարհային քաղաքականության մեջ հզորագույն գործիքի ու շարժիչ ուժի՝ տնտեսության դերակատարությունը։ Արմատական սոցիալական փոխակերպություններով հոյի արդիականությունը պատմության մեջ հերթական անգամ կենդանացնում է սոցիալական կեցության ապահովման համար հոգեբարոյական բաղադրիչի վերահստատման անհրաժեշտության մասին հարցը։ XIXդ. հայ պահպանդականության ակնառու ներկայացուցիչ՝ Գարբրիել Այվազովսկու ազգային

<sup>2</sup> Միրումյան Ռ., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ։ Մերոդարձանական վերլուծություն, Նոյյան տապան, 2003, էջ 210, 214։

հայեցակարգում տնտեսությունը ներկայացվում է որպես ազգի նյութական բարօրությունն ապահովող հիմք, իսկ դա, իր հերթին, մարդու (ազգի) ողջ կենսագործունեության և Պատմության վսեմ նպատակի՝ երջանկության հասնելու նախապայմանն է:

Հիմնվելով եվրոպական տնտեսագիտական մտքի նվաճումների և հասլաքապես Ա. Սմիթի, Դ. Ռիկարդի, որ Թրասիի, Զ.Ս. Միլի և այլոց հիմնայրույթների վրա՝ Գ. Այվագրվակին հաստատում է, որ առանձին մարդու նյութական բարօրությունն ազգի (հասարակության, պետության) նյութական հարստության հիմքն ու գրավականն է: Ընդ որում, մարդու (ազգի) լիարժեք կենսագործունեությունն ապահովող նյութական հարստությունն անհրաժեշտորեն պետք է ձեռք բերվի բարոյական վսեմ օրենքի՝ արդարության կիրառմամբ, այն է ազնիվ և մշտական աշխատանքի միջոցով: Այս տեսակետից նա մերժում է ինչպես հարուստներից ողորմություն ստանալու միջոցով սեփական կենսական կարիքները հոգալու առանձին մարդու, այնպես էլ զավթողական պատերազմների միջոցով հարստանալու որոշ ազգերի ձգուումը: «Արքատին ողորմություն տալը խիստ աղեկ ու գովելի, և յավիտենական վարձուց արժանի» բան համարելով, հայ պահպանողականը, սակայն, գտնում է, որ «առնողին (ողորմություն. - Ռ. Ս.) շատ անզամ ծովութեան պատճառ կը լլայ ու աւելի վնաս կը նե: Ողորմութիւն տուտդը թէ պէտ և զիտնայ աս վնասը, կրնայ զգիտնալ թէ ինչ ընելու է որ աս վնասը չը լլայ»<sup>3</sup>: Հարստության միակ հզմարիտ ճանապարհը, ըստ կրոնական մտածողի, ազնիվ աշխատանքն է. «...թէ, այս ինքն իրենց ամէն պիտոյքը հանզիստ կերպով ունենալ, պէտք է որ բնութեան բերքերը առնեն ու իրենց օգտին համար բանեցընեն. Որ միայն աշխատանքով ու արեւստներով նոր ծաղկեցընելով կը լլայ»<sup>4</sup>:

Աշխատանքը, այսպիսով, Այվագրվակին սահմանում է որպես Աստծո կողմից մարդուն տրված սեփական կենսական անհրաժեշտ պահանջմունքները բավարարելու կարևորագույն միջոց: Աշխատանքը նույնքան կարևոր է ողջ ազգի (հասարակության, պետության) լիարյուն կենսագործունեության և բնականոն զարգանալու համար: Այս համատեքստում ընկալելի է մտածողի այն պնդումը, թէ աշխատանքը մարդու (ազգի) մշտապես կենսագործվող բարոյական երանգ ունեցող

<sup>3</sup> Այվագրվակի Գ., Թէ ինչ է հարստութիւնը և, ուսկից առաջ կուգայ// «Բազմավեպ», Վենետիկ, 1843, N 6, էջ 84-85:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 86:

պարտականությունիրավունք է. «...մեկը աշխատանքով հարստութիւն դիզելն է ետքը՝ իրավունք չունենար բոլորովին աշխատանք է դադրելու: Աստուած պէտք է որ նախատես եղած ըսայ թէ քանի որ մարդիք շատնան՝ նոր աշխատանքներ պիտի աւելնան, որով մեկը հարուստ՝ մեկալը աղքատ ըլլալով, նոր նոր առաջնութիւններ ալ պիտի ծաղկին մարդկանց մէջ, որոնց առջինը կրնայ սեպուի սերն ու ողորմութիւնը: Ուստի կրնանք ըսել թէ Աստուած աս աշխատութեան պատիժը (որպէս պարտականություն.- Ռ.Ս.) դնելով ալ՝ աւելի բարիք մը ուզել է ընել մարդկանց»<sup>5</sup>: Աշխատանքային գործունեության զիստավոր ոլրուներից մեկը կրոնական մտածողը համարում է մտավոր աշխատանքը, որով գրադադար մարդկանց, ըստ նրա, «Աստուած աւելի բարձր հանձարմը միտք մը տուել է»: Աստվածային այս շնորհի միջոցով մարդը «ընկերութեան պահապան ըրտողներուն կարգը կըմտնէ»<sup>6</sup>:

Այլազովսկու սահմանմամբ՝ ֆիզիկական և մտավոր ոլրուների մարդու աշխատանքային գործունեության բաժանումը համահարաբերական է նույն մարդու երկակի բնությանը՝ բաժիցած «մտաւոր հոգին ու նիւթական մարմիննե...ուստի մէկ կողմէն նիւթական մասին՝ յաստուած մարմնոյն կարօտութիւնը կըլեցընէ, մտաւոր աշխատանքով ալ իր հոգին կամաց կամաց աւելի կըլուսաւորի ու իրեն սկզբանը կըմօտենայ: Բայց շիտակը նայելով, որիցէ աշխատանք ալ երբ որ աս վոխճանը չունի, անօգուտ է և վնասակար»<sup>7</sup>:

Հայ մտածողը փաստում է, թէ աստվածապարզ աշխատանքի գերազույն նպատակը մարդու կենսական պահանջմունքների բավարարումն ու նրա բարոյականության զարգացումն է: Մինչդեռ բաղարակրթության զարգացմամբ պայմանավորված և մարդու կենսական պահանջմունքի վերածված հնարովի (արհեստածին) սովորությունների երեան գալը մեծապես խոչընդոտում է այդ զարգացումը: Այլազովսկու նման հարցադրումն արդիական էր ոչ միայն XIX դարում, այլև հատուկ հնչողություն է ձեռք բերել մեր ժամանակաշրջանում: Մտածողի մատնանշած ազգային (հասարակական) բնականոն կենսագործունեության և բարոյական նկարագրի «բարեկավման» համար վտանգավոր այս միտումը մեր օրերին վերածվել է սոցիալական մի այնպիսի լուրջ հարցի, որը

<sup>5</sup> Այլազովսկի Գ., Աշխատանք // «Բազմավեպ», Վենետիկ, 1843, N 18, էջ 276:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 277:

վկայում է արդի (արևմտածին տեխնոգեն քաղաքակրթության) խոր ճգնաժամի մասին: Այնհայտ է, որ միայն քաղաքակրթական զարգացման նոր հարացույցի ձևավորմամբ է հաղթահարելի արագ խորացող այս ճգնաժամը: Վերջինից խորքային պատճառների և առաջին նշանների մասին հայ կրոնական մտածողը հետևյալ կերպ է դատել. «Հիմակուան մեծամեծ քաղաքներու վիճակին նայելով, ոմանք աշխատանքի անկարող են, ոմանք աշխատանք չունին, ոմանք ալ աշխատանքէ կփախչին: Անկարողութիւնը առաջ կուգայ բնական կամ բարոյական տկարութենէ: Աշխատանք չունենալը առաջ կուգայ բնական կամ բարոյական տկարութենէ, արհեստներուն շբանելէն, փոխուելէն, և այլն: Իսկ աշխատանքէ փախչիլը առաջ կուգայ ծովութենէ ու բարուց ապականութենէ: Եւ ահա ասոնք են աղքատութեան բուն պատճառները, և աս իրեքին ալ դարմանք կըլլայ սիրով և ողորմութեամբ<sup>8</sup>:

Ըստ Այվազովսկու, մարդու աշխատանքային գործունեության բուն նպատակը բարոյական է՝ ըստ Էության: Այն դեպքում, եթե աշխատանքը նպատակ ունի միայն մարդու «նիւթական» պահանջմունքները բավարարելու կամ «նորելուկ» սովորությունների միջոցով նոր (արհեստածին՝ ըստ Էության) պահանջմունքների սկզբնավորման պատճառ դառնալու, ապա «քանի երթայ ան աշխատանքը անօգուտ կըլլայ ու վնասակար»<sup>9</sup>: Մտածողը բացահայտում է քաղաքակրթական իմաստով վտանգավոր այդ միտման պատճառահետևանքային կապը. «...մարդկանց անձնիւրութիւնը կանցընէ, ազահութիւնը կըշատցընէ, ազահութիւնը կըշատցընէ, այլևայլ վիճակներուն անհաւասարութիւնը կըմեծցընէ, ժողովրդեան մեջ փափկութիւնն ու հիւանդութիւնը կանցընէ, և շատ անկարգութեանց պատճառ կըլլայ: Իրաւ է որ աշխատանքը հարստութեան պատճառ է, բայց շատ անգամ ան աշխատանքը ընել տուտղները և վճարողները աւելի կրհարստանան քան թէ բուն աշխատաւորները. Ի՞նչ է պատճառը: Վասն զի աշխատանքը աշխատաւորներուն ալ օգտակար ըլլալու համար պէտք է որ բարեկարգ ըլլայ, և արժանաւոր վճարը ունենայ: Անատեն միայն կրնայ աշխատանքը թէ ճշմարիտ հարստութեան պատճառ ըլլալ, և թէ մարդկային երջանկութեան. և ան ատեն միայն նոր գիտերը կրնան

<sup>8</sup>Նոյն տեղում, էջ 277:

<sup>9</sup>Նոյն տեղում:

վնաս չընել արհեստներուն մանաւանդ թէ արհեստներն ալ՝ քաղաքականութիւն (քաղաքակրթությունը.-Ռ.Ա.) ալ ծաղկոցներ»<sup>10</sup>:

Այլազովսկու այս դատողությունները համահունչ են ինչպէս նրա ժամանակաշրջանի փիլիսոփայա-քաղաքական մտքի նվաճումներին, այնպէս է քրիստոնեական բարոյական ուսմունքի հիմնարար սկզբունքներին: Ակնհայտ է, որ դրանք խիստ արդիական են մեր օրերում, երբ համաշխարհայնացման հարցույցի կենսագործման հետևանքով տապալվեցին հայտնի պետությունների վարչակարգերը, բացահայտորեն կողոպտվեցին մի շարք երկրներ և միջնավոր մարդիկ մի ակնքարթում գրկվեցին սեփական հոդից, գրից և ապրուստի անհրաժեշտ միջոցներից:

Ազգի (հասարակության, պետության) տնտեսական կյանքի մասին հայ պահպանողականի դատողություններում տեղ է գտել նաև հողագործության խնդիրը: Հողագործության առաջացումը նա պայմանավորում է մարդու կենսական պահանջմունքների բավարարման անհրաժեշտությամբ: Ըստամին, հողագործության զարգացումը դիտվում է իրեն ազգերի տնտեսական զարգացման նախապայման, ինչպէս նաև նրանց քաղաքակրթվածության աստիճանից ցուցիչ: Այս տեսակետից ազգերը բաժանվում են «երկրագործ» և «պատերազմող» ազգերի. «...երկրագործ ազգերը ծաղկելով մարդկութեամբ և իմաստութեամբ առաջ երթալու ճամբուն մէջն էին.քայլ պատերազմող ազգերը մէկուն մէկախնը յափշտակելու ելան, թէ ապրուստ գտնելու համար, և թէ ուրիշներուն վրայ տիրելու, որ իրենց փառք կըսեպէին: Ուստի ան երկրագործ ազգերն ալ որ պատերազմող ազգերուն սահմանակից էին, ծաղկելու տեղ մէծամեծ թշուառութեանց մէջ ընկան, և հարկաւորեացան իրենք ալ պատերազմող ազգի կեանք անցրնել»<sup>11</sup>: Հողագործ և խաղաղասեր ազգերի շարքին մտածող դասում է նախ՝ հայ ազգին, որը «առջի բերան երկիրները բանեցրնելու հետ էր, Հայկ նահապետն սկսեալ ստիպեցաւ պատերազմներու հետ զրադիլ շրջակայ ազգաց դէմ, և ան պատճառու չկրցաւ ծաղկիլ ինչպէս որ կըսուացուէր»<sup>12</sup>:

Հայաստանի երկրագործության պատմության սկիզբը կապելով «թէ աշխարհիս սկզբանը և թէ ջրհեղեղէն ետև» ընկած ժամանակաշրջանի

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 277-278:

<sup>11</sup> Այլազովսկի Գ., Երկրագործութեան պատմութիւնը // «Բազմավեպ», Վենետիկ, 1843, N 4, էջ 59:

<sup>12</sup> Նույն տեղում:

հետ, Այլագովսկին հաստատում է, որ բոլոր ժամանակաշրջաններում Հայաստան երկրի թագավորները հասուկ ուշադրություն են դարձել հողագործության արվեստին: Հայոց թագավորների այս շարքում նաև առանձնացնում է Սանատորովի որդու Արտաշեսի անունը, որի երկրաշեն առաքելության իր բարձր գնահատականը հիմնավորում է Սոուսես Խորենացու հեղինակավոր կարծիքով<sup>13</sup>:

Մտածողի պնդմամբ, եթե Հայաստան աշխարհն անդադար պատերազմների մեջ չգտնվեր, «իւելք դուրս բան պիտի ըլլար Հայաստանին երկրագործութեանը ծաղկիլը. վասն զի այսպիսի արհեստները սիրտ կուգեն և փորձի կարօտ են: Աս ճարտարահնար երկրագործութիւնը հայոց միանալով երկրին բարեբերութեանը հետ, փափաքելի ըրին շրջակայ ազգերուն Հայսատան երկիրը.ուստի երկրին վրայ տիրած ատեննին շատ հարկեր վրան ձգելոք, շատ ալ կողոպուտ, հասնելն վերջը, կրզարմանային թէ ուստի՝ կելլեր Հայսատանին մէջն այնչափ զանձը»<sup>14</sup>: Այս համատեքստում մտածողը հիշատակում է նաև Բագրատունյաց և Ռուբինյանց ժամանակաշրջանները, որոնք պատմության մեջ արդարացիորեն համարվում են հողագործության բարձր զարգացման շրջափուլեր: Հաստատելով, որ հողագործության <<հոգին» մինչև իր ժամանակաշրջանը պահպանվել է հայ ազգի մեջ, հայ պահպանողականն իր միտքը հիմնավորում է Միհիթար Գոշի «Դատաստանագիրը» աշխատության մեջ հողագործության մասին վկայություններով: Ենթադրությունը, նա հետեւեցնում է, թէ եթք որ մի ազգի մեջ «մէկ նիւթի մը վրայ զիրք շինուի կամ թարգմանուի, նշան է, որ ան բանին փափառողներ և հարկաւորութիւնը ճանչցողներ կը գտնուին մէջը»<sup>15</sup>:

Իր միտքը հիմնավորելու նպատակով մտածողն անդրադառնում է եվրոպական ժողովուրդների պատմությանը. «Երոպացիք ալ շատ բարբարոսութեան ժամանակներ և պատերազմի դարեր անցընելէն ետքը, հիմա ինչպէս ուրիշ զիտութեանց այսպէս ալ երկրագործութեան ետևէ ընկած են...»<sup>16</sup>:

Հատկանշական է, որ տնտեսագիտության նկատմամբ և ազգի (հասարակության, պետության) նյութական հարստության նկատմամբ

<sup>13</sup> Հմմտ.՝ Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., ԵՊՀ հրատ., 1981, էջ 203:

<sup>14</sup> Այլագովսկի Գ., Երկրագործութեան պատմութիւնը, էջ 60:

<sup>15</sup> Նոյն տեղում:

<sup>16</sup> Նոյն տեղում:

մեծ հետաքրքրություն նկատելի է նաև հիշյալ ժամանակաշրջանի հայ իրականության մեջ: Այսպես, Այվազովսկին պարբերաբար հողվածներ էր տպագրում իր խմբագրած Միմիթարյան միաբանության համբեսի «Բազմավեպ»-ի էջերում: Միմիթարյան միաբանության մեկ այլ ներկայացրուցի՝ Մանվել Քաջունու գրչին է պատկանում «Երկրագործութեան» (Տարերը) աշխատությունը, որում խոսվում է հենց հողագործության արվեստի մասին: Մանվել Քաջունու այս գիրը (ծավալով 233 էջ) տպագրվել է Միմիթարյան տպարանում և ունեցել է երկու հրատարակում (1889թ. և 1920թ.):

Հողագործության հարցերին անդրադարձել են նաև դարաշրջանի հայ ազատականները, որոնց քաղաքական տեսության դասագրքերը, ինչպես նաև տնտեսական խնդիրները լուսաբանող տեսական աշխատանքները գրված են եվրոպական տնտեսագետների հայացքների ազդեցության ներքո: Այսպես, Ռ. Պերպերյանը մեծ ազդեցություն է կրել Ա. Սմիթի և Դ. Շիկարդոյի, իսկ Ստ. Պալասանցյանը՝ Ա. Թիերի կողմից: Հայ մտածողները, ինչպես ազատականները, այնպես էլ պահպանողականները, կատարել են բազմաթիվ թարգմանություններ եվրոպական լեզուներից: Այսպես, օրինակ, Միմիթարյան միաբանության ներկայացրուցիչ Հ. Դավիթ Նազարեթյանը ֆրանսերենից աշխարհաբար է թարգմանել Ռաբեթ «Առձեռք տնտեսագիտություն բարոյական և քաղաքական» (Վենետիկ, Միմիթարյան միաբանության տպարան, 1879, 512 էջ):

Հողագործության վերաբերյալ Այվազովսկու բոլոր գաղափարներն ամփոփելի են նրա հետևյալ դատողություններում: «Երկրագործութեան» արհեստին տեղեկութիւնը այնչափ հարկաւոր է մարդու, որ առանց ասոր երկիր մը, տուն մը, տէրութիւն մը, զավատ մը, տուն մը, բարեբարդ չի կրնար ըլլայ»<sup>17</sup>: Մտածողի այս տրամաբանությամբ՝ առանձին մարդը, թեկուզ և շատ հարուստ, չի կարող “բարեբաղդ” մարդ համարվել, եթք որ իր ազգը գործազրկության և թշվառության մեջ է գտնվում: «Բարեբաղդ» է համարվում միայն այն մարդը, որը գիտի, թե ինչպես երջանկացնի իրեն և իր ազգը: Այդ իսկ պատճառով «ո թ և իցէ ազգ, ո թ և իցէ դարու և երկիր մեջ, «բարեբաղդ» ըլլալու համար՝ ամէն բանէն առաջ երկրագործութիւնը ջանացել են ծաղկեցնել, և անով միայն առաջ գացեր են: Մէկ երկիր մը

<sup>17</sup> Այվազովսկի Գ., Երկրագործութեան օգուտն ու հարկաւորութիւնը // «Բազմավեպ», 1843, N2 էջ 26:

մեջ առանց երկրագործութեան եղած հարստութիւնը կը նմանի առանց հիման շինած պալատի մը որ շինուելու ատենը կըսկըսի փըչիլ»<sup>18</sup>:

Դրանից հետևում է, որ իրական հարստությունը միայն հողագործությամբ է պահովվում: Ուստի հողագործության անհրաժեշտության ըմբռնումը ենթադրում է հողագործական արվեստի գաղտնիքների իմացությունը, քանզի հողագործությունը ոչ միայն արվեստ է, այլև գիտություն:

### ԱՍՓՈՓՈՒՄ

XIX դարից հայ կրոնական մտածող և դարաշրջանի հայ պահպանողականության ակնառու ներկայացուցիչ Գարբիել Այվազովսկու ազգային հայեցակարգում տնտեսությունը բնութագրվելի է իբրև ազգի ինքնապաշտպանության հասարակական կառուցակարգ: Մեփականության հիմնախնդիրը մտածողը քննարկում է «պարտքիրավունք» հոգեբարոյական օրենքի համատեքստում: Ըստ այս, սեփականությունը, հարստությունը ձեռք է բերվում Աստծո կողմից մարդու համար նախասահմանված պարտականության՝ աշխատանքի արդյունքում: Վերջինիս իրական նպատակն է հասարակության անդամների առաջնային պահանջմունքների բավարարմամբ՝ մարդու (ազգի) հոգեբարոյական և մտավոր զարգացման պահովումը: Հակառակ դեպքում աշխատանքը վնասակար է դառնում ինչպես առանձին մարդու, այնպես էլ մի ամբողջ ազգի (պետության) համար: Մեփականության (հարստության) հիմնախնդիրի համատեքստում հոդվածում դիտվում է նաև հայ պահպանողականի առաջնարած հողագործության խնդիրը:

Գ. Այվազովսկու պնդմամբ ազգի (պետության) տնտեսական կյանքի բարելավման ամենակարևոր պայմանը հողագործական արվեստի զարգացումն է: Բայց վերջինիս ապահովման կարևորագույն պայմանն է ազգային կրթությունն ու դաստիարակությունը:

Գ. Այվազովսկու տնտեսագիտական հայացքների կիզակեսոն է «արդարություն» քրիստոնեական օրենքը: Մտածողի առաջարած բոլոր հիմնահարցերը (աշխատանք, սեփականություն, հարստություն, հողագործություն և այլն) քննարկվում են այդ սկզբունքի ներքո: Դարաշրջանի հայ մտածողների հայացքներին բնորոշ «Մեփականությունը իրավունք/պարտականություն և» բանաձևում Այվազովսկին, ի տարբերություն անզամ որոշ հայ պահպանողականների

<sup>18</sup> Նոյն տեղում, էջ 26-27:

(օրինակ, Խորեն Աշոբյանի), շեշտադրում է այդ բանաձեռի «պարտականություն» կողմը: Դա բացատրելի է այն փաստով, որ «աշխատանքը մարդու իրավունք/պարտականություն եւ հայ մտածողների որդեգրած (այդ թվում նաև՝ Խ.Աշոբյանի)՝ բանաձեռում նա շեշտադրում է այդ բանաձեռի երկրորդ՝ «պարտականություն» կողմը<sup>19</sup>:

Անփոփելով նշեմ, որ եթե հայ լրտավորիչների հայացքներում ուրվագծող «աշխատել - գոյատել - բարգավաճել - վայելել» հարաբերակցության մեջ սեփականության հիմնախնդիրը շաղկապվում է ազգի (ազգության) պահպանման գերինդրին, ապա հայ պահպանողականների, այդ թվում նաև՝ Գ. Այվազովսկու հայացքներում ուրվագծվող «աշխատել - գոյատել - բարգավաճել - ծառայել» հարաբերակցության մեջ սեփականության հիմնախնդիրը շաղկապվում է ազգի բարոյական նկարագրի պահպանման գերինդրին:

Բանալի բառեր աշխատելու պարտականություն, կենսական պահանջմունքներ, աշխատանքի եռթյուն, հողագործական արվեստ, երջանկության նախապայման:

## ЭКОНОМИКА КАК ОБЩЕСТВЕННЫЙ МЕХАНИЗМ САМОЗАЩИТЫ НАЦИИ В ПОЛИТИКО-ФИЛОСОФСКОЙ КОНЦЕПЦИИ ГАБРИЕЛА АЙВАЗОВСКОГО

Римма Мирумян

Доктор философских наук, профессор,  
ведущий научный сотрудник Института философии,  
социологии и права, НАН РА

### РЕЗЮМЕ

В национальной концепции армянского религиозного мыслителя XIX века, видного представителя армянского консерватизма эпохи Г. Айвазовского экономику, обеспечивающую материальное благосостояние нации, можно охарактеризовать как социальный механизм самозащиты нации. Проблему собственности мыслитель рассматривает в контексте духовно-нравственных законов «обязанность-право». В соответствии с этим собственность (богатство) приобретается в результате предопределенной для человека Богом обязанности – работы. Истинная цель последней – через удовлетворение первичных потребностей членов

<sup>19</sup> Հմմտ.՝ Աշոբյանց Խ., Աշխատութիւն // «Յոյս» (Յարմաշ). 1865, N 12, էջ 269, 271:

общества – обеспечение духовно-нравственного и интеллектуального развития человека (нации). В противном случае работа становится вредной как для отдельного человека, так и для всей нации (государства).

В контексте проблемы собственности (богатства) в статье рассматривается также поставленный армянским консерватором вопрос земледелия. По утверждению Г.Айвазовского, самым важным условием улучшения экономической жизни нации (государства) и обеспечения всех сфер ее жизнедеятельности является развитие искусства земледелия. Важнейшим же условием обеспечения этого является национальное образование и воспитание.

**Ключевые слова:** обязанность трудиться, жизненные потребности, сущность труда, искусство земледелия, предусловие счастья.

## ECONOMICS AS A PUBLIC MECHANISM OF NATIONAL SELF-DEFENSE IN THE POLITICAL AND PHILOSOPHICAL CONCEPT OF GABRIEL AIVAZOVSKY

Rimma Mirumyan

*Doctor of Philosophy, Professor,  
Leading Researcher of the Institute of Philosophy,  
Sociology and Law of NAS RA*

### SUMMARY

In the national concept of the Armenian religious thinker of the XIX century, a prominent representative of the Armenian conservatism of that epoch Gabriel Aivazovsky the economy providing the material well-being of the nation can be described as a social mechanism of national self-defense. The thinker considers the problem of property in the context of the spiritual and moral laws «duty-right». In accordance with this, property (wealth) is acquired as a result of duty-work predetermined by God for man. The true goal of the latter is to ensure the spiritual, moral and intellectual development of man (nation) through the satisfaction of the primary needs of members of society. Otherwise, work becomes harmful both for an individual and for the whole nation (state).

The issue of agriculture is also considered in the article in the context of the problem of property (wealth) posed by the Armenian conservative. According to G. Aivazovsky, the most important condition for improving the economic life of a nation (state) and ensuring all spheres of its life is the development of the art of farming. The most important condition for ensuring this is national education and upbringing.

**Key words:** duty to work, satisfaction of vital necessities, essence labor, art of farming, preconditions for the happiness.